Herausgeber:
Landesfeuerwehrverband Schleswig-Holstein
Hopfenstraße 2d
24114 Kiel
www.LFV-SH.de

Verantwortlich: Hauke Erichsen

Alle Rechte der Vervielfältigung und Verbreitung in jeglicher Form vorbehalten. Kein Teil des Werkes darf ohne schriftliche Genehmigung des Landesfeuerwehrverbandes Schleswig-Holstein reproduziert, vervielfältigt, verarbeitet oder verbreitet werden.

Gefördert mit Mitteln des

Armenisch · հայերեն

ՁԵՐ ՀՐՇԵՋ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԿԵՆՏՐՈՆԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է ...

Հրդեհներից խուսափել և ճիշտ պահվածք ցուցաբերել

Մարդկանցով, մարդկանց համար երկրում

ՓՈՔՐ ՀՐԴԵՀՆԵՐԸ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՀԱՆԳՑՆԵԼ

առանց սեփական կյանքը վտանգելու:

Ծուխը նույնքան վտանգավոր է ինչպես կրակը, թերևս այն ավելի արագ է տարածվում:

ՏԵՂԵԿԱՑԵՔ.

- թե ինչպես կարելի է Ձեր բնակարանից, կամ Ձեր եղած սենյակից, աստիճաններին, միջանքին, ելքերին, կամ անհրաժեշտ ելքերին հասնել:
- որտեղ է գտնվում ամենամոտ հեռախոսը, հրդեհ ազդարարող սարքը, կամ շենքի ազդարարը:
- թե ինչպես կարելի է շտապ կանչը ճիշտ հայտնել:
- որտեղ են գտնվում կրակմարիչները կամ այլ կրակմարիչների սարքավորումները:

ԻՆՉ ԱՆԵԼ, ԵՐԲ ՀՐԴԵՀ Է ԱՌԱՋԱՆՈՒՄ.

ԵՐԲ ՓԱԽՈՒՍՏԻ ՈՒՂԻՆԵՐԸ ԾԽԱՊԱՏՎԱԾ ԵՆ

նահանջել դեպի ծխից ազատ մի սենյակ, դուռը փակել և այն անթափանց դարձնել հագուստներով կամ վերմակներով:

Բացված պատուհանից օգնություն կանչել:

Երբեք կուրորեն չցատկել պատուհանից դուրս:



ԶԳՈՒՅՇ ԵՂԵՔ՝ ԿՐԱԿԻ, ԿԱՄ ՀՈՍԱՆՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ:

Ծխողները պետք է միշտ ոչ դյուրավառ նյութից պատրաստված մոխրամաններ օգտագործեն, ոչ թե թղթերի, կամ նման այլ աղբարկղներ: Հարգեք՝ „ծխելը արգելվում է“ հայտարարությունը:

Ոչ մի անգամ բաց կրակը և այլ ջերմային սարքերը, առանց հսկողության մի թողեք: Արդուկը, եփելու սարքերը, կամ էլեկտրական վառարանները և դրանց նմանները, ուժեղ ջերմության աղբյուրներ են և նույնքան վտանգավոր, ինչպես բաց կրակը:

Ոչ մի անգամ էլեկտրական սարքերը չծածկել:

Վնասված, կամ ոչ մասնագիտորեն վերանորոգված էլեկտրական սարքերը, նաև երկարացնող լարերը, հրդեհի և էլեկտրական հոսանքի մեծ վտանգներ են պատճառում և չպետք է օգտագործվեն:

Ծալված կաբելները, կամ հաճախակի միացումների պատճառով ծանրաբեռնված հաղորդալարերը կարող են շատ տաքանալ և հրդեհի պատճառ դառնալ:



ԻՆՉ ԱՆԵԼ, ԵՐԲ ՀՐԴԵՀ Է ԱՌԱՋԱՆՈՒՄ.

Կանխել հրդեհները:

Նախաբան

Detlef Radtke

Նահանգային հրշեջ վարպետ

Հրշեջ ծառայությունը ցանկացած երկրի՝ հասարակության անվտանգությունն ապահովող կարևորագույն մասնիկներից մեկն է: «Ժողովրդի հետ ժողովրդի համար մեր երկրում» կարգախոսը քարոզում է մեզ շրջապատող մարդկանց սատարելը և օգնելը՝ անկախ նրանց կրոնից մաշկի գույնից և ծագումից:

Այս գրքույկը ցուցումների և գործնական օրինակների հավաքածու է և լավ հիմք է հանդիսանում հակահրդեհային աշխատանքի պատրաստվելու համար: Շլեսվիգ-Հոլշթայնի հրշեջ ծառայությունը ցանկանում է տարբեր լեզուներով աջակցել բոլոր տղամարդկանց և կանանց, ովքեր բացի ընդհանուր հրշեջների աշխատանքից նաև փախստականներին են աջակցում:

Նպատակը իսկզբանէ փոխադարձ վստահություն և հասկացողություն հիմնելն է: Մենք շնորհակալ ենք բոլոր նրանց, ովքեր այս նպատակին են ծառայում:

Շլեսվիգ-Հոլշթայնի հրշեջ ծառայության անունից, շնորհակալություն ենք հայտնում մասնավորապես պարոն Հաուկե Էրիկսոնին՝ այս գրքույկը կամավոր, իր գաղափարներով մշակելու համար:

Detlef Radtke

ՆԱԵՎ ՄԻ ԱՅԼ ՑՈՒՑՈՒՄ

Հրդեհից պաշտպանվելու բոլորի խնդիրների շուրջ, Ձեզ կարող է օգնել Ձեր բնակավայրի հրշեջ ծառայություն կենտրոնը.

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՐԵՔ՝

- որպեսզի փախուստի և փրկության բոլոր ուղիները միշտ ազատ լինեն: Աստիճանները և միջանցքները փրկության ուղղիներ են, դրանք պետք է մշտապես ազատ լինեն: Դրանք պահեստի սենյակներ չեն:
- - այդ փախուստի ուղիներում դռները միշտ փակ պետք է լինեն, որպեսզի հրդեհի և ծուխի տարածումը կասեցվի:
- - ճանապարհները դեպի շենքերը և ջատար խողովակները պետք է փակ չլինեն:
- - անվտանգության սարքավորումները եւ հրդեհամարիչները վնասված չլինեն, կամ որ շարքից չեն հանվել:

ՀՐՇԵՋ ԾԱՌԱՅՈՐԹՅԱՆՆ ԱՀԱՋԱՆԳԵԼ

- Հեռախոսահամար 112!
- ասացեք Ձեր անունը,
- հայտնեք պատահարը,
- հայտնեք դեպքի վայրը,
- հայտնեք թե որքան մարդիկ են վտանգի տակ.
- Պատասխանեք մյուս հարցերին:
- Պահպանեք հեռախոսակապը: հեռախոսազրույցը կավարտվի միայն հրշեջ ծառայության աշխատակցի կողմից:

Հրշեջ ծառայությանը երբեք կատակով չզանգահարել:

ՊԱՀՊԱՆԵԼ ՀԱՆԳԻՍՏ

խուճապից խուսափելը, ամենագլխավոր պատվիրանն է:

Երբ որևը մեկը խուճապի է մատնվում, ապա հնրարավորություն չունի, վտանգի պարագայում, անվնաս մնալ:



ԱՊԱՀՈՎ ՎԱՅՐ ՏԵՂԱՓՈԽԵԼ

և զգուշացնել սենյակակիցներին :

Հատուկ ուշադրություն դարձնել այն մարդկանց վրա, ովքեր օգնության կարիք ունեն: Երեխաները եւ կարիքավորները առաջնություն ունեն, որովհետև նրանք ի վիճակի չեն իրենք իրենց օգնել:



ԻՆՉ ԱՆԵԼ, ԵՐԲ ՀՐԴԵՀ Է ԱՌԱՋԱՆՈՒՄ.

Եթե հնարավոր է, փակել պատուհանները:

Սնպայման փակել դռները, որպեսզի նվազեցնել հրդեհի և ծխի տարածումը:

Արագ հեռանալ բնակարանից, կամ շենքից:

Շնչահեղձություն պատճառով, երբեք վերելակներ չօգտագործել: Էլեկտրական հոսանքի խափանման դեպքում Վերելակները կանգ կառնեն կես ճանապարհին:

Շենքի բոլոր բնակիչները պիտի հավաքվեն շենքի առաջ և սպասեն մինչև հրշեջ խմբի ժամանումը:

Պատրաստ եղեք հրշեջ խմբի, կամ ոստիկանության հարցերին պատասխանել:



ԻՆՉ ԱՆԵԼ, ԵՐԲ ՀՐԴԵՀ Է ԱՌԱՋԱՆՈՒՄ.

ԻՆՉ ԱՆԵԼ, ԵՐԲ ՀՐԴԵՀ Է ԱՌԱՋԱՆՈՒՄ.